Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
հունիսի 11 -ի N 380 - Ա որոշման

**Համայնքներին մաքուր խմելու ջրի մատակարարման**
**Ծրագիրը (WE201700703/WE201700188)**

| | |
|---|---|
| 1. Ծրագրի նպատակը | Ներկայացվող ծրագրի նպատակն է ապահովել և բարելավել խմելու մաքուր ջրի մատակարարումը ՀՀ տարբեր մարզերի 3 համայնքի բնակիչներին: Հայաստանի գյուղերի մեծ մասը խմելու ջրի ցանցերի վերակառուցման կարիք ունի: Առաջարկվող 3 գյուղի որոշ մասերում խմելու ջուրը մատակարարվում է հնամաշ, օգտագործման համար ոչ պիտանի խողովակներով: Ծրագրով նախատեսվում է այդ խողովակների փոխարինումը նոր խողովակներով: |
| 2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի բարեգործական որակման նպատակն է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնություններից: |
| 3. Բարեգործը | «Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիա» շահույթ չհետապնդող կազմակերպություն, հասցեն՝ ԱՄՆ, Յութա նահանգ, Սոլթ Լեյք Սիթի քաղաք |
| 4. Ծրագրի կատարողը | Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչություն, հասցեն՝ քաղ. Երևան, Արամ Խաչատրյան 21/47, ՀՎՀՀ՝ 01526777 |
| 5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է ՀՀ 3 համայնքում (դրանք ներկայացված են 7-րդ կետում): Ծրագրի բնագավառը՝ սոցիալական: |
| 6. Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 13599340 դրամ: Ծրագրի բյուջեն հաստատվել է կորպորացիայի հոգաբարձուների խորհրդի կողմից: Յուրաքանչյուր համայնքի ծրագրի բյուջեն հաստատվել է Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի կենտրոնական գրասենյակում: Ծրագրի բյուջեն ըստ համայնքների և ծրագրի կատարման պայմանները համաձայնեցված են բոլոր համայնքների ղեկավարների հետ՝ նրանց հետ կնքելով համապատասխան համաձայնագրեր: |
| 7. Բարեգործություն ստացողները | Բարեգործություն ստացողներն ըստ մարզերի և ըստ համայնքների հետևյալ են.<br><br>NN \| Մարզերը \| Գյուղերի անվանումները \| Բնակչ. թիվը<br>1. \| Վայոց ձոր \| Գողթանիկ \| 420<br>2. \| Լոռի \| Գարգառ \| 1650<br>3. \| Լոռի \| Արջուտ \| 1400<br> \| Ընդամենը \| \| 3470<br><br>Համայնքներն ընտրվել են կարիքավորության և մեկ բնակչին ընկնող ծախսի հաշվարկի հիման վրա: Ամբողջ աշխարհում նմանատիպ ծրագրերի իրականացման համար կազմակերպության չափանիշների համաձայն յուրաքանչյուր բնակչին բաժին ընկնող ծախսի գումարը պետք է կազմի 10 ԱՄՆ-ի դոլարին համապատասխան գումար: Այս ծրագրից կօգտվի 3470 մարդ: |
| 8. Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը կիրականացվի 2019 թվականի մայիսի 20-ից և կավարտվի ոչ ուշ, քան 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: Ծրագրի բոլոր միջոցառումները կիրականացվեն այդ ժամանակաշրջանում: |
| 9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսվում է համայնքներում տեղադրել 3200 մետր խմելու ջրի պոլիէթիլենային խողովակներ: Խողովակները և դրանց մոնտաժման համար անհրաժեշտ պարագաները 9745450 դրամով ձեռք են բերվելու «Վեդի Պլաստ» ՍՊԸ-ից (քաղ. Վեդի, Կոմիտասի 1, ՀՎՀՀ՝ 04109451, հ/հ՝ 220123330239000, ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ, Վեդու մ/ճ): Այդ ընկերությանը պետք է վճարվի նաև 252000 դրամ գումար՝ նշված խողովակները համայնքներ տեղափոխելու տրանսպորտային ծախսերի, դրանց մոնտաժման և փորձարկման աշխատանքների համար, «Վեդի պլաստ» ՍՊԸ-ին ընդամենը պետք է վճարվի 9997450 դրամ: Պահանջվող ապրանքների մատակարարումները կսկսվեն 2019 թ. մայիսի 20-ից և կավարտվեն ոչ ուշ, քան 2019 թ. նոյեմբերի 15-ը: Միջոցառումները մանրամասնորեն նկարագրված են 10-րդ կետում: Օգտագործվող այլ շինանյութերի և այլ աշխատանքների՝ պոլիէթիլենային խողովակների տեղադրման համար պահանջվող խրամուղիների փորման, դրանց նախապատրաստման, ճանապարհների անցումների կառուցման, խրամուղիների հետլիցքի, խողովակների կցամասերի, մետաղյա խողովակների, պահանջվող գործիքների արժեքը նախատեսվում է 3601890 դրամի չափով: Նշված գումարը տրամադրվելու է համայնքների կողմից լիազորված կապալառու կազմակերպություններին (անհատ ձեռնարկատերերին)՝ տեղերում շինանյութերի գնման և |

| | |
|---|---|
| | համայնքի ուժերով վերանորոգման ու նախապատրաստական աշխատանքների կազմակերպման համար: Համայնքներին փոխանցվող գումարները հետևյալն են. |

| NN | Մարզը | Համայնքը | Գումարը՝ դրամ |
|---|---|---|---|
| 1. | Վայոց ձոր | Գողթանիկ | 1665290 |
| 2. | Լոռի | Գարգառ | 1337310 |
| 3. | Լոռի | Արջուտ | 599290 |
| | Ընդամենը | | 3601890 |

Ծրագրով վարչական ու կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:

**10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**

ՎՕՍ Բարեգործական Կորպորացիայի կողմից վերանորոգվող խմելու ջրագծեր

| NN | Մարզերը | Գյուղերի անվանումները | Բնակչության թիվը | Պոլիէթիլենային և մետաղյա խողովակներ (մետր) | Խողովակների, կցամասերի և դրանց մոնտաժման արժեքը՝ դրամ | Շինանյութերի և վերանորոգման աշխատանքների արժեքը՝ դրամ (տրվում է համայնքներին) | Ընդամենը՝ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1. | Վայոց ձոր | Գողթանիկ | 420 | 1000 | 1023350 | 1665290 | 2688640 |
| 2. | Լոռի | Գարգառ | 1650 | 1200 | 5328900 | 1337310 | 6666210 |
| 3. | Լոռի | Արջուտ | 1400 | 1000 | 3393200 | 599290 | 3992490 |
| | Ընդամենը | | 3470 | 3200 | 9745450 | 3601890 | 13347340 |
| | Խողովակների տեղափոխման և մոնտաժման ծախսեր | | | | | | 252000 |
| | Ընդամենը՝ խողովակների, շինանյութերի և վերանորոգման գծով ծախսեր | | | | | | 13599340 |

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բոլոր նյութերը ձեռք են բերվելու տեղական շուկայից: Ծրագրով ապրանքների ներմուծում չի նախատեսվում: Ծրագրով նախատեսված է նաև գյուղերի ներդրումը՝ մասնակցությունը ծրագրի իրականացմանը՝ համայնքների անդամների աշխատանքով: Աշխատանքների ձևով այդ ներդրումները գնահատվել և ամրագրվել են գյուղերի հետ կնքված պայմանագրերում, սակայն քանի որ այդ աշխատանքների համար վճարումներ չեն կատարվելու, ապա դրանց համար չեն նախատեսվում ստանալ հարկային արտոնություններ:

| | |
|---|---|
| 11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրով վարչական ու կազմակերպական ծախսեր նախատեսված չեն. այդպիսի ծախսեր չեն կատարվելու: |
| 12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչությունն աշխատելու է Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, համապատասխան նախարարությունների և մարզպետարանների, ինչպես նաև անմիջապես յուրաքանչյուր շահառու համայնքի հետ: |
| 13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագիրն իրականացնողի կողմից ՀՀ կառավարության 2013 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվություններ ներկայացնելը լիազորված մարմին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԱՎԻՆՅԱՆ